փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (տե՛ս, Ֆերդինանտ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը կամ թիվ ԵԱՔԴ/0554/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը):

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատական ծախսերը պետք է կատարվեն փաստացիորեն անհրաժեշտաբար և, որ դրանց քանակը ողջամիտ է (տե՛ս, Ֆիլիպն ընդդեմ Հունաստանի թիվ 1 1991 թվականի օգոստոսի 27-ի վճիռը, Շարքեր Ա, էջ 25, կետ 74, կամ Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի 1988 թվականի մարտի 25-ի վճիռը):

Դատարանն արձանագրում է, որ ԱՁ Հարություն Օհանյանի և Ատոմ Ռոմիկի Կարապետյանի միջև 26.11.2024 թվականին կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիրը, որի 3.1 կետի համաձայն՝ ծառայությունների մատուցման գինը կազմում է 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումար (ներառյալ հարկերը):

Սույն գործով Հայցվորի ներկայացուցիչը ներկայացրել է հայցադիմում, ապացույցներ գործը քննվել է գրավոր ընթացակարգով:

Դատարանն ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, նկատի ունենալով, որ հայցը բավարարվում է, գտնում է, որ սույն գործով հայցվոր կողմի փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը կազմում է 80.000 ՀՀ դրամ, ուստի պետք է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հօգուտ Ատոմ Կարապետյան Ռոմիկի ԱՁ-ի բռնագանձել 80.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. Ատոմ Կարապետյան Ռոմիկի ԱՁ-ի հայցն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ թիվ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/2-Վ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 5.2-րդ կետով «Ատոմ Կարապետյան Ռոմիկի» Ա/Ձ-ին 95-րդ չափաբաժնի մասով հաղթող (ընտրված) մասնակից ճանաչելու մասին

որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

անվավեր ճանաչել թիվ ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/2-Վ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 5.2-րդ կետով «Ատոմ Կարապետյան Ռոմիկի» Ա/Ձ-ին 95-րդ չափաբաժնի մասով հաղթող (ընտրված) մասնակից ճանաչելու մասին որոշումը

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հօգուտ Ատոմ Կարապետյան Ռոմիկի ԱՁ-ի բռնագանձել 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը՝ պետական տուրքի մասով, համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am